ASATRYANS

Անկախ աուդիտորական եզրակացություն

Վեգա Ուորլդ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցին

Մեր կողմից իրականացվել է Վեգա Ուորլդ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (Ընկերություն) կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվություն

Մեր պատասխանատվությունն է մեր կողմից անցկացված աուդիտի հիման վրա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելը: Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք համապատասխանենք վարքագծի պահանջներին և աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռքբերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընթացակարգերի ընտրությունը կախված է աուդիտորի դատողությունից, ներառյալ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկերի գնահատումը: Նշված ռիսկերը գնահատելիս, աուդիտորը դիտարկում է կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողությունը՝ նպատակ ունենալով նախագծել տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր՝ բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև՝

ASATRYANS LLC
Boulevard Plaza Business Center,
64 Aram street, 2nd floor,
Yerevan 0002, Armenia
T. + 374 10 53 07 27
+ 374 99 54 33 88
E-mail: general@asatryans.com
www.asatryans.com

ԱՍԱՏՐՅԱՆՆ ՍՊԸ
Բուլվար Պլազա Բիզնես-Կենտրոն,
Արամի փող. 64, 2-րդ հարկ,
ՀՀ, Երևան, 0002
Հ. + 374 10 53 07 27
+ 374 99 54 33 88
Էլ. հասցե՝general@asatrayns.com
www.asatryans.com

ASATRYANS

կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների խելամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները տալիս են Վեգա Ուորլդ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Հանգամանքների լուսաբանում

Ցանկանում ենք ուշադրություն հրավիրել այն փաստին, որ ներկայացված համադրելի տվյալները, բացառությամբ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 27-ում նկարագրված ճշգրտումների, հիմնված են Ընկերության 31 դեկտեմբերի 2012թ. դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների տվյալների վրա, որոնց աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 14 փետրվարի 2013թ. եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք: Որպես 2013թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտի մաս՝ մենք իրականացրել ենք ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 27-ում ներկայացված ճշգրտումների աուդիտը, որոնք կիրառվել են նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունների տվյալները վերահաշվարկելու համար:

Մեր կարծիքով, նշված ճշգրտումները տեղին են և կիրառվել են ըստ պատշաճի: Մեզ չի հանձնարարվել իրականացնել Ընկերության 2012թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, դիտարկում կամ կիրառել այլ ընթացակարգեր այդ ֆինանսական հաշվետվությունների հետ կապված՝ բացառությամբ նշված ճշգրտումների, այդ իսկ պատճառով, մենք կարծիք կամ որևէ այլ հավաստում չենք արտահայտում Ընկերության 2012թ. ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

23 հունիսի 2014թ.

Սերգեյ Ասատրյան

Տնօրեն

ԱՍԱՏՐՅԱՆՍ ՍՊԸ

Աննա Ավետիսյան

Վրաջ ադրանքի ղեկավար

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ

	Ծնթ.	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերահաշ-վարկված)	2012թ. հունվարի 1-ի դրությամբ (վերահաշ-վարկված)
Ակտիվներ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	4	14,954	11,373	382
Ոչ նյութական ակտիվներ		-	433	-
Հետաձգված հարկային ակտիվներ	5	44,832	29,045	17,816
		59,786	40,851	18,198
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	6	1,576,859	1,013,330	230,031
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	393,561	261,075	277,621
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	8	129,704	77,090	91,102
		2,100,124	1,351,495	598,754
Ընդամենը ակտիվներ		2,159,910	1,392,346	616,952

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ

	Ծնթ.	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերահաշ-վարկված)	2012թ. հունվարի 1-ի դրությամբ (վերահաշ-վարկված)
Սեփական կապիտալ և պարտավորություններ				
Կապիտալ և պահուստներ	9			
Կանոնադրական կապիտալ		50	50	50
Կուտակված շահույթ		(291,550)	(154,540)	(41,640)
		(291,500)	(154,490)	(41,590)
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	10	152,210	135,785	-
Պահուստներ	11	260,436	115,209	-
		412,646	250,994	-
Ընթացիկ պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	10	1,308,466	1,117,524	540,734
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	536,006	69,323	117,423
Պահուստներ	11	186,404	107,473	-
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն	13	7,888	1,522	385
		2,038,764	1,295,842	658,542
		2,451,410	1,546,836	658,542
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		2,159,910	1,392,346	616,952

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2014թ. ապրիլի 23-ին:

Մարինե Պողոսյան
Տնօրեն

Գոհար Մանուկյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 37-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ

	Ծնթ.	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարի	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարի (վերահաշ-վարկված)
Հասույթ	14	2,840,129	1,215,192
Վաճառքի ինքնարժեք		(2,655,346)	(1,178,320)
Համախառն շահույթ		184,783	36,872
Այլ եկամուտ		859	13,878
Իրացման ծախսեր	15	(56,854)	(12,943)
Վարչական ծախսեր	16	(165,458)	(83,698)
Այլ ծախսեր	17	(6,132)	(20,673)
Գործառնական գործունեությունից շահույթ		(42,802)	(66,564)
Ֆինանսական ծախս		(74,354)	(63,504)
Այլ ֆինանսական հոդվածներ	18	4,056	1,735
Շահույթ մինչև հարկումը		(113,100)	(128,333)
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	19	(23,910)	15,433
Տարվա շահույթ		(137,010)	(112,900)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		(137,010)	(112,900)

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 37-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: